Ծ Ր Ա Գ Ի Ր
<<ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ>> ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Յուրաքանչյուր կազմակերպության համար կարևոր են ֆինանսական խնդիրների ***ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ***, թաքնված ֆինանսական ռեզերվների և զարգացման հնարավորությունների բացահայտումը: Հետևաբար, կարևորելով կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատումը, ֆինանսական կայունության ապահովումը, ռիսկերի գնահատումը, շահութաբերության բարձրացումը, ներդրումների էֆեկտիվության գնահատումը, ֆինանսական ցիկլերի արդյունավետ կառավարումը, Master Class-ի համար մշակված ծրագրով մասնակիցների համար ստեղծվել է հնարավորություն՝ ինքնուրույն կատարել ֆինանսական ցուցանիշների վերլուծություն, արդյունավետ իրականացնել կազմակերպության ֆինանսական միջոցների ընթացիկ (օպերատիվ) կառավարում և մշակել կազմակերպության ֆինանսական կառավարման ռազմավարություն:

Master Class-ի շրջանակներում, միջազգային ստանդարտներին համապատասխան, ինտերակտիվ եղանակով մանրամասն քննարկվում են կազմակերպության ֆինանսական կառավարման մեթոդները՝ շահութաբերության, ֆինանսական կայունության, եկամուտների և ծախսերի վրա առանձին գործոնների ազդեցության, ռիսկերը կանխատեսելի դարձնելու, ինչպես նաև վերլուծության պրակտիկ կիրառելիության շրջանակներում: Մեկնաբանվում են ֆինանսական հաշվետվությունների միջոցով տարբեր գործակիցների հաշվարկման մեխանիզմներն ու մեթոդները, իսկ վերլուծության միջոցով ստացված արդյունքների հիման վրա մասնակիցները ստանում են կազմակերպության կարճաժամկետ և հեռանկարային ֆինանսական ռազմավարության մշակման հմտություններ:

Դասընթացը բաղկացած է 3 փուլից, որոնք փոխկապված են միմյանց և միասին ամբողջացնում են ֆինանսական վերլուծության և դրա արդյունքների միջոցով պատճառահետևանքային կապերի բացահայտմամբ արդյունավետ կառավարչական որոշումների կայացման հնարավորությունները: Բոլոր թեմաների շրջանակներում բացի մեթոդական մասից ներկայացվում և քննարկվում է կազմակերպության տվյալներով գործնական օրինակ, որի միջոցով մասնակիցները հնարավորություն են ստանում գործնականում ավելի հմտանալ ֆինանսական հոսքերի վերլուծության և հնարավորինս ճիշտ որոշումների կայացման մեջ:

<u>ՄԱՍ 1</u>

Կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների վերլուծություն

Հ/Հ	*Թեմայի անվանում*	*Ժամաքանակ*
1	Կազմակերպության ֆինանսական վերլուծության ցուցանիշներ, գործոնային վերլուծություն: Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններ:	2
2	Վճարունակության և իրացվելիության վերլուծություն:	2
3	Կազմակերպության ֆինանսական կայունության գնահատում:	2
4	Կազմակերպության հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության գնահատում:	2
5	Նյութական պաշարների օգտագործման արդյունավետության գնահատում:	2
6	Աշխատանքի և աշխատավարձի գործոնային վերլուծություն:	2
7	Արտադրանքի արտադրության (ծառայության, աշխատանքի) ծավալի վրա ազդող գործոնների վերլուծություն:	2
8	Դեբիտորական պարտքերի վերլուծություն և կառավարում:	1
9	Կրեդիտորական պարտքերի վերլուծություն և կառավարում:	1
10	Ֆինանսական պարտավորությունների վերլուծություն:	1
11	Կազմակերպության վարկունակության գնահատում:	1
12	Դրամական հոսքերի վերլուծություն և կառավարում:	2
13	Ֆինանսական արդյունքների վերլուծություն: Եկամուտների և ծախսերի վերլուծություն, էֆեկտիվության գնահատում:	2
14	Շահույթի և շահութաբերության վերլուծություն (ROA, ROE, Դյուպոնի մոդել):	2
16	Կազմակերպության գործարար ակտիվության գնահատում՝ ֆինանսական ցիկլերի կառավարում:	2
17	ԱՄՓՈՓՈՒՄ	2
ԸՆԴԱՄԵՆԸ		**28**

ՄԱՍ 2

Կազմակերպությունների ֆինանսական միջոցների ընթացիկ կառավարման գնահատում

Հ/Հ	Թեմայի անվանում	Ժամաքանակ
1	Անվնասաբերության (ծախսածածկման) կետի հաշվարկ և գնահատում:	1
2	Ֆինանսական լծակի հաշվարկ և գնահատում:	1
3	Ֆինանսական ռեսուրսների ընթացիկ պահանջի կառավարում:	1
4	Կազմակերպության բաժնետիրական կապիտալի կառավարում:	1
5	Կապիտալի ընթացիկ օգտագործման կառավարում:	1
6	Կազմակերպության ֆինանսական պոտենցիալի գնահատում:	1
7	ABC+XYZ վերլուծություն՝ ապրանքային տեսականու վաճառքի ծավալների, հասույթի և շահույթի կառավարման համար:	1
8	ԱՄՓՈՓՈՒՄ	1
ԸՆԴԱՄԵՆԸ		**8**

ՄԱՍ 3

Կազմակերպությունների ֆինանսական ռազմավարության և պլանավորման մոդելների մշակում

Հ/Հ	Թեմայի անվանում	Ժամաքանակ
1	Դիսկոնտավորման գործակցի հաշվարկ: Ներդրումների արդյունավետության գնահատում, հետգնման ժամկետ (NPV, PI, IRR, PP):	2
2	Կազմակերպության կապիտալի միջին կշռված արժեքի գնահատում (WACC):	1
3	Կազմակերպության տնտեսական գործունեության արդյունավետության և ինտենսիվացման համալիր գնահատում:	1
4	Սնանկացման ռիսկի գնահատման մոդել (Ալթմանի, Ֆուլմերի, Ստրինգեյտի, Լիսի, Տաֆֆլերի մոդելիների համալիր վերլուծության հիման վրա):	2
5	Ֆինանսական ռազմավարության մատրիցա:	1
6	Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների հիման վրա տնտեսական ռիսկի գնահատում:	1
7	ԱՄՓՈՓՈՒՄ	2
ԸՆԴԱՄԵՆԸ		**10**

Master Class-ի շրջանակներում կատարվում են տարբեր գործակիցների միջոցով կազմակերպության ավելի քան 150 ֆինանսական ցուցանիշների (փաստացի և համեմատական) վերլուծություններ և ֆինանսական արդյունքային ցուցանիշների գնահատում, ինչն օգնում է բացահայտելու ֆիրմայում առկա խնդիրները, հետագա գործողությունների հետ կապված ֆինանսական ռիսկերը, կամ առավելությունները: Ներկայացվում են MS Excel-ում տարբեր գործիքների կիրառմամբ ամփոփ ցուցանիշների և գործակիցների ստացման հմտություններ: Ի վերջո, վերլուծություններն ամփոփվում են արդյունավետ ֆինանսական մենեջմենթով՝ կառավարչական որոշումներ կայացնելիս հաշվի առնելով ստացված ֆինանսական գնահատականները: